ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՐԱՄԱՆ

24 հունիսի 2021 թվականի N ԱԿ 651 - Ա

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 39-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը և Սարգիս Հովհաննիսյանի 2021 թվականի հունիսի 23-ի անձնական դիմումը.

հրամայում եմ.

1. Սարգիս Հովհաննիսյանին 2021 թվականի հունիսի 28-ին նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության բաժնի ավագ տեսուչ (ծածկագիր՝ 66-28.1-Մ3-25)՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Սարգիս Հովհաննիսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Երևան քաղաքի

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ օրդ՝ 8107

տարածքային կենտրոնի դեղերի շրջանառության վերահսկողության բաժնի պետ-տեսուչ (ծածկագիր՝ 66-28.1-Ղ5-1) Նարեկ Կարապետյանին:

3. Սարգիս Հովհաննիսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Подписано: AVAGYAN HAKOB 3912770166 Հ. ԱՎԱԳՅԱՆ

2021թ. Հուլիսի 24
Երևան

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107